



Սայաթ Նովա

Հրնդկաց քաղաքիցը հանած

Հնդկաց քաղաքիցը հանած, ջավահիր քար արմանալու,
Ինչի դիաչիս նաղըշ կոնիս, օսկե փարգալ արմանալու.
Ամեն մարթ չի կանա ճարի շահով շրքար արմանալու.
Մարթ հիդըղ չի կանա խոսի, Բոստոմի Ջա՛լ արմանալու:

Շիմշատի ծառ բահամ էկած, շենքըղ տաշիլը ինչ կոնե.
Էրանի է քու տիրուշը, յադին յաշիլը ի՛նչ կոնե.
Էրէարդ խասա մուրսա՝ դալամ քաշիլը ի՛նչ կոնե.
Կարմիր ու կանանչ ու ճերմակ, սարիսար ա՛լ արմանալու:

Դու՛ն հիշտ դիմիշ ա՛նելու չիս, ճրրաք վառած, դըժար ճարած.
Օվ օր Էրեսըղ կու տեսնե, խիլքը կու դառնա շըվարած.
Անգին յաղութ, անգին ալմաս, բոլորքըղ ջավահիր շարած.
Սկանդարի Ջուլդարեն թողած՝ ջընաղ հեքալ արմանալու:

Համաշա սեյրան իս անում, վարթ ու մանուշակ թաղում իս.
Շուշա-բըրդլե գուլաբդան բերնեղ վարթաջուր մաղում իս.
Թաքավորի քաշի ջիղա, օսկե թիլըղ շաղմաղում իս.
Հուրսուրդի ձեռիցը փախած ջեյրան, մարալ արմանալ:

Ցա՛ր, քիզանից հիռանալըս մեռնելուս վըրա դըժար ա.
Էշխիցըղ Մեջլում իմ դառի, ի՛նչպես ա՛նիմ ինձի չարա.
Ավելի չէ Սայաթ Նովեն՝ քիզի ծառա ու նոքար ա.

Նրբանից ձեռքը քաշիլը՝ շատ ա էտ, լա՛լ արմանալու: